

Մերձ ի հասանելն առ թագաւորն Պարսից, եւ զկարծեցեալ զխաբէական զիւր զմիամտութիւնն ծանուցեալ թագաւորին եւ աւագանայն Արեաց՝ եւ առնուլ վարձս ըստ մոլեկան խորհելոյն իւրոյ զթագաւորութիւնն իսկ Յայոց: 10 «Ապա թէ յայնմանէ վրիպեալ ինչ, ասէ, գտանիմ՝ համայն զայլն ամենայն, զպատիւ եւ զգահս, առանց ամենայն երկբայութեան եւ յերկուանալոյ գտանեմ, եւ իմ են»: 11 եւ զտէր Աստուած ոչ հարցեալ, որ ասէ մարգարէին, թէ *Թագաւորեցին, եւ ոչ ինեւ, եւ դաշինս կռեցին, եւ ոչ իմով կամաւ*^ա: 12 Որում ի ժամ պատահելոյ նենգաւորին, ըստ իւրում կարծեաց, այսպիսի մեծամեծ պատուոյ, յառաջեալ արդարախնդիր բանն Աստուծոյ, եւ *զդիմակս նենգաւոր խորհրդոց նորա մերկացեալ ցրուեալ*², վեր ի վայր տապալեաց զամենայն դառն մտածութիւնս առն, որպէս զվայրաթոյն խորհուրդն Ակիտովկելալ^բ:

13 եւ արդ ելեալ սա զմիջոցաւ ճանապարհին, ուր զսուրբ քահանայսն Աստուծոյ³ տանէին կապեալս, նստուցեալս ի վերայ շորւոց, եւ բազմութիւնք չուելոցն, որ էինն ընդ անաւրինին⁴ Վասակայ՝ հասին նահատակացն Զրիստոսի: 14 եւ նոցա հարցեալ, եթէ «ո՞յր է բազմութիւնս այս⁵»՝ լուան ի մարդկանէ, թէ «Սիւնեաց տեառնն է». եւ նոքա ասեն. «Աւադիկ մաւտ առ մեզ գայ»: 15 Լռեալք ի հարցանելոյ⁶ սուրբքն՝ ճանապարհին ուշադրէին. եւ սուրբն Յովսէփ հարցանէր ցայրն Աստուծոյ Ղեւոնդ⁷, թէ «Գիտեմ թէ հասեալ գայ ի մեզ Վասակ՝ լրբի անամաւթութեամբ սրտիւ գալ առ մեզ յողջոյն. եւ քոյ զմտաւ ածեալ՝ ո՞րպէս պարտ է առնել մեզ հրամայեա՞⁸, եւ այնպէս առնեմք մեք»: 16 եւ սրբոյն Ղեւոնդի պատասխանի տուեալ ասէ. «Զվարդապետութիւն Փրկչին մի՛ խնդրեր ուսանել ի մարդոյ. Յոր քաղաք կամ ի գեաւոյ⁹ մտանիցէք՝ ողջոյն ասացէք. եւ ուր գտցի¹⁰ որդի ողջունի՝ հանգիցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա, ապա թէ ոչ իցէ արժանի՝ առ ձեզ դարձցի ողջոյնն^ա: 17 եւ այն ինչ կատարեալ նոցա զհարցուածսն առ միմեանս՝ եկեալ

1 Ձ. մերձ հասանել... խաբէական

ա ես. Լ 1

2 Ձ. ցրուեաց

բ Հմմտ. Բ Թագ. ԺԵ 31:

3 ՏՏ. չիք Աստուծոյ

4 Ձ. ընդ անօրէնին

5 Ձ. այս բազմութիւնս

6 ՁԱԲտ. լուեալք ի հարցանելոյ. այսպէս ըստ ուղղագրութեան Գտ. (ըստ Ն. Բ.)

7 Ձ. դեւոնտ

8 Ձ. հրամայեաց

9 ՏՏ. կամ գեօլ

10 Ձ. որ գտցի

ա Մատթ. Ժ 11-13